

Աղջիկների և տղաների դաստիարակության առանձնահատկությունները



Ծնողների մեծամասնությունը պնդում են, որ տարբերությունն չկա տղա և աղջիկ երեխաների դաստիարակության ժամանակ: Այնուհանդերձ, ըստ հոգեբանների ու մանկավարժների, սոցիալական տեսակետից տղամարդ և կին չեն ծնվում: Թեթևամտություն կլինի ենթադրել, որ տղան ինքնուրույն «իսկական տղամարդ» կմեծանա, իսկ աղջիկը տարիքի հետ

ծեռք կբերի կանացիության անհրաժեշտ հատկությունները:

Տղամարդկությունն ու կանացիությունն անհրաժեշտ է երեխաների մեջ դաստիարակել: Եվ նման դաստիարակությունը պետք է սկսել արդեն նախադպրոցական տարիքից: Երեխայի սեռական դաստիարակության խնդիրը պետք է իրենց վրա վերցնեն ծնողներն ու նախադպրոցական հաստատության դաստիարակները:

Շատ կարևոր է նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ձևավորել ընտանեկան հարաբերությունների իդեալական վիճակ և տղամարդկության և կանացիության պատկերացումները: Անհրաժեշտ է փոքրիկին հնարավորություն տալ շփվել տարբեր սեռերի մարդկանց հետ, այդ պատկերացումներն ամրապնդելու համար:

Միմյանց լրացնելու մեթոդով տղա-աղջիկ երեխաների շփումը ընդհանուր գրադմունքի շուրջը հետագայում կնպաստի տղամարդ-կին հարաբերություններին, միմյանց հասկանալուն և գնահատելուն, ապագա ընտանիքում իրենց հստակ տեղն ու պարտականություններն իմանալուն:

Նախևառաջ, փորձենք հասկանալ, ի՞նչ է տղամարդկությունը և ի՞նչ է կանացիությունը: Ցավոք, այս հասկացությունները հստակ ձևավորված չեն և տարբեր ազգեր տարբեր ձև են դրանք սահմանում: Պատմականորեն եկած ավանդույթներով տղամարդն ապահովում է ընտանիքի կացությունը,

իսկ կինը՝ դաստիարակում երեխաներին և կազմակերպում կենցաղային հարցերը:

Տղամարդկությունն ասելիս հասկանում ենք քաջություն, վճռականություն, հուզականության տեսակյունից զսպվածություն, ուշադրություն և կնոջ հանդեպ նրբազգացություն:

Կանացիությունը կարելի է բնութագրել որպես քնքշություն, համբերատարություն, նրբազգացություն և այլն:



Ընթերցանություն և էթիկ գրույցներ

Գրականությունը ընտրելիս կարևոր է, որ այն լինի երեխայի համար հասկանալի լեզվով, հուզականորեն հետաքրքիր լինի, ունենա վառ պատկերներ, որպեսզի հետագայում երեխան կարողանա դրանք արտահայտել խաղի միջոցով: Պակաս կարևոր է, որպեսզի հեքիաթների ու պատմվածքների հերոսներն ունենան թե՛ արտաքինի, և թե՛ ներքնաշխարհի նկարագրություն: Լսելով պատմվածքներ ու հեքիաթներ, ծնողների ու մանկավարժների հետ քննարկելով գլխավոր հերոսների գործողությունները, երեխաները իրենց պատկերացնում են նրանց փոխարեն և նրանց հետ միասին վերապրում պատմությունը: Նման գրականությունը կօգնի երեխաների մոտ ստեղծել որոշակի հուզական տրամադրվածություն: Տղամարդկության և կանացիության մասին, ընտանիքի և նրա անդամների մասին ճիշտ պատկերացում ձևավորելը շատ կարևոր է երեխայի ապագայի համար:

Դերային խաղեր

Շատ հայտնի հոգեբաններ ու մանկավարժներ դերային խաղերին շատ մեծ տեղ են հատկացնում, հատկապես դրանց ազդեցությունը երեխայի հուզական աշխարհի ու նրա զգամուլների վրա: Դերային խաղի ժամանակ երեխան կրկնօրինակում է իր սեռին համապատասխանող մոդելին (հայր, մայր, փրկարար, վաճառողուհի և այլն): Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել տղաների հերոսական խաղերին՝ «կռիվ-կռիվ» և

այլն: Սակայն, որպեսզի «կռիվ-կռիվ»-ը չվերածվի զենքը ձեռքին սովորական վազելուն, պետք է երեխային բացատրել, որ նրանք «կռվում են հանուն հայրենիքի, պաշտպանում են նրանց, ովքեր կարիք ունեն օգնության, այդ թվում նաև երեխաներին ու կանանց»: Աղջիկների համար օգտակար խաղեր են ընտանեկան-կենցաղային թեմաներով խաղերը: Այն գեղարվեստական գրականությունը, որն ավելի շուտ ընթերցվել էր երեխաների համար, կարող են հիմք հանդիսանալ նրանց խաղերի համար: Ընդ որում, այստեղ խոսքը գնում է ոչ թե պատմվածքի ու հեքիաթի թատերական բեմականացման մասին, այլ երեխան ինքն է հիմնականում մտածում սյուժեի շարունակությունը, նոր հերոսներ է ներգրավում խաղի մեջ և այլն:

Հոգեբանական մթնոլորտ

Երեխայի սեռային դաստիարակության ժամանակ շատ կարևոր դեր է կատարում ընտանիքում տիրող հոգեբանական մթնոլորտը: Շատ կարևոր է, որ ծնողները միմյանց հանդեպ ուշադիր լինեն ու հարգանքով վերաբերվեն միմյանց: Վեճերը բացասաբար են ազդում ոչ միայն



փոքրիկի սեռային դաստիարակության հոգեբանության վրա, այլ նաև ներկա գտնվելով ծնողների վեճերին, երեխայի մոտ ի հայտ կգա հուզական անհավասարակշռություն, անհանգստություն ու ինքնամփոփություն:

Հայրը տղայի, մայրը աղջկա հետ կիսելով զբաղմունքները, տղաների մոտ արարելու, իսկ աղջիկների մոտ ձեռագործով զբաղվելու ցանկություն է առաջանում: Աղջիկների համար օգտակար կլինի նաև օգնել մայրիկին և զբաղվել տնային գործերով: Իրենց հերթին, հայրիկները, պետք է որդու մեջ ամրապնդեն կանացի հանդեպ ուշադրությունն ու հարգանքը, սովորեցնեն հոգ տանել նրանց մասին ու օգնել մայրիկներին:

Եվ հիշեք, երեխաները հայելի են, որոնք արտացոլում են իրենց ծնողների պահվածքն ու ապրելակերպը: